ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 հուլիսի 2017 թվականի N 12

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի առաջին մասով, 164-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշումը և Կարեն Սիմոնյանի 2017 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավարի օգնական Կարեն Սիմոնյանին 2017 թվականի հուլիսի 18ից տրամադրել 2017 թվականի ամենամյա արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ և 2017 թվականի լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 21-ից:

3.2017 թվականի հուլիսի 18-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավարի օգնականի լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Շահգալդյանին մինչև 2017 թվականի օգոստոսի 21-ը:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 17թ. հուլիսի 12
գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 հուլիսի 2017 թվականի N 13

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի առաջին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արշալույսի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ելենա Քարամյանի 2017 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արշալույսի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ելենա Քարամյանին 2017 թվականի հուլիսի 17-ից տրամադրել 2016 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ և 2017 թվականի լրացուցիչ արձակուրդը՝ 1 աշխատանքային օր տևողությամբ:

2. Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 1-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

20 17 թվականի հուլիսի 13
գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 հուլիսի 2017 թվականի N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<Արշալույսի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Մամիկոնյանի 2017 թվականի հունիսի 30-ի ծանուցումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի օգոստոսի 1-ից լուծել Աննա Վոլոդյայի Մամիկոնյանի հետ 2015 թվականի ապրիլի 8-ին կնքած թիվ 52/1 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<Արշալույսի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի հուլիսի 19
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 հուլիսի 2017 թվականի N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի 1 կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 24-ի թիվ 38 որոշումը և Կարինե Ֆիդանյանի 2017 թվականի հուլիսի 20-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի օգոստոսի 1-ից Կարինե Մերուժանի Ֆիդանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր նշանակելով նրան որպես Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<Արշալույսի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի հուլիսի 31
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017 թվականի N 15

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սեփականություն հանդիսացող 0.0188 հա բնակավայրի այլ հողին տալ հասցե .Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 19-րդ փողոցի թիվ 17/2 այլ հող:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի հուլիսի 7
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017 թվականի N 16

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սեփականություն հանդիսացող 0.00198 հա հատուկ պահպանվող տարածքների պատմական և մշակութային հողամասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 1 փողոցի թիվ 45/1 հասցե :

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի հուլիսի 7
գ. Արշալույս